Բնապահպանական նախագիծ

Նախագծի ղեկավար՝ Լարիսա Սարգսյան

Թեմա	Թռչուններ
Նախագծի անվանումը	Հայաստանի ձմեռող թռչունները
ՈՒսումնական տարի	2023-2024 II կիսամյակ
Դպրոցը	Շիրակի մարզի <<Մայիսյանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ
Դասարանը	VII (հիմնական դպրոց)
Առարկա	Երկրաչափություն
Տևողությունը	(V) Կարճաժամկետ ( ) Միջնաժամկետ ( ) Երկարաժամկետ

Նախագծի մեկնարկ	6.02.2024թ.	
Նախագծի վերջնաժամկետ	12.03.2024	
Ձևաչափ	Թիմային	
Տեսակ	-	Ներառարկայական
	V	Միջառարկայական
	-	Վերառարկայական

Նախագծի նպատակը

•	*Սովորողների մոտ ձևավորել հետազոտական,ստեղծագործական հմտություններ:*
•	*Սովորողներին ներգրավել բնապահպանական խնդիրների լուծման աշխատանքներին:*
•	*Տալ հարուստ գիտելիքներ ՀՀ-ում ձմեռող թռչունների դասերի, տիպերի, ընտանիքների,տեսակների,կ սակերպի,բազմացման,բնության մեջ և մարդու կյանքում նրանց օգտակարության մասին:*
•	*Մշակել թիմի հետ աշխատելու,հաղորդակցվելու,նպատակին հասնելու համար պայքարելու կարողո թյուններ:*
•	*Ձևավորել բնապահպանական հարցերում ակտիվ համայնք:*
•	*Նախագծի թեմային համահունչ տարբեր աղբյուրների միջոցով ուսումնասիրել ՀՀ-ում ձմեռող թռչուն- ներին սպառնացող վտանգները,գտնել դրանց վերացման արդյունավետ ուղիները:*

Հետազոտության հիմնախնդիրը

Հայաստանում նստակյաց կյանք վարող՝ ձմեռող թռչունների նկատմամբ մարդկանց կողմից հիմնականում դրսևորվում է անտարբեր վերաբերմունք, որի պատճառով կան թռչունների տե- սակներ, որոնք վայրի բնության մեջ կանգնած են անհետացման չափազանց բարձր ռիսկի առջև :

Հետազոտության հիմնախնդրից բխող հիմնահարցեր

N	Բովանդակություն
1.	*Ի՞նչպես ձևավորել հասարակական վերաբերմունք հետազոտվող հիմնախնդրի լուծման համար:*
2.	*Ի՞նչպես իրազեկել համայնքի բնակիչներին (սահիկաշար,պաստառ,գրքույկ,տեսաֆիլմ,բանավեճ,թերթիկ և այլն):*
3.	*Աշխատանք տանել այն պետական նշանակության տեղական կառույցների հետ,որոնք պատասխանատու այս հիմնախնդրի համար:*
4.	*Գտնել և առաջարկել այլընտրանքային ձևեր ու մեթոդներ,գործողություններ,որոնք կնպաստեն հիմնախնդ լուծմանը:*

Բնապահպանության հետ միջառարկայական կապ

(v) *Աշխարհագրություն*	(v) *Բնագիտություն*	(v) *Կենսաբանություն*	(v) *Ֆիզիկա*
(v) *Մաթեմատիկա*	(v) *Քիմիա*	(v) *Գրականություն*	( ) *Հայոց լեզու*
(v) *Երաժշտություն*	(v) *Նկարչություն*	(v) *Տեխնոլոգիա*	(v) *Էկոլոգիա*

Նախագծի նկարագիրը

Նախագիծն ուղղված է Հայաստանում ձմեռող թռչունների նկատմամբ մարդկանց կողմից դրսևորվող անտարբերության հաղ-թահարմանը,վայրի թռչունների որոշ տեսակներ անհետացումից փրկելուն ուղղված նոր ձևերի ու միջոցների հայտնաբերմանը, հասարակության մոտ բնապահպանական խնդիրների լուծման գործում յուրաքանչյուր անհատի, համայնքի ակտիվ մասնակ-ցության ապահովմանը,սովորողների բնապահպանական գիտելիքների հարստացմանը և հասարակության շրջանում հետա-զոտման ներկայացվող թեմային վերաբերվող խնդիրների լուսաբանմանը: Այս հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է,որ սովորողները խորությամբ ուսումնասիրեն Հայաստանում ձմեռող թռչուններին վերաբերվող տեղեկությունները ինտերնե-տային կայքերից,լրատվամիջոցներից,մասնագիտական գրականությունից: Նախագծի շրջանակներում սովորողներն ուսումնասիրում են ՀՀ-ում,մասնավորապես Շիրակի մարզում ձմեռող թռչուններ ար-տաքին կառուցվածքը, տարածվածությունը, սնունդառությունը, կենսակերպը, բնադրումը, բազմացումը և զարգացումը:Շատ կարե-վոր է նշել այն թռչնատեսակները,որոնք մարդու կողմից հատուկ հոգածության կարիք ունեն,որովհետև գտնվում են ոչնչացման վտանգի առաջն և գրանցված են Կարմիր գրքում:

Սովորողներն ուսումնասիրում են թռչնաբների,կերամանների պատրաստման հայտի ձևերն ու տեսակները, առաջարկում են այլընտրանքային տարբերակներ ու մեթոդներ :

Հետազոտական աշխատանքները կազմակերպելու համար նախագծի ղեկավարը(դասղեկը)կազմակերպում է նախապատրաս- տական աշխատանք.

1.Սովորողներին ներկայացնում է նախագծի հիմնախնդիրը,նշելով թեմայի կարևորությունը .
2.Դասարանը աշակերտների որոշմամբ բաժանվում է 2 թիմի (խմբի) յուրաքանչյուրում 5-ական աշակերտ:
3.Աշակերտներն ընտրում են նախագծի կառավարիչ,որը չի կարող լինել որևէ թիմի անդամ:
4.Աշակերտները լրացնում են <<թիմեր>>, <<դերեր>> աղյուսակները:
5.Կազմվում է աշխատանքների կազմակերպման ժամանակացույցը:

Նախագծի կատարումը գնահատվում է շնորհանդեսի միջոցով:Ստեղծված նյութերը հանրայնացվում են,ներկայացվում համայնքի բնակչությանը և համայնքապետարան: Երկու թիմերն էլ կատարում են նույն թեմային վերաբերվող առաջադրանք= ներ,որոնք ներկայացվում են **<<Սովորողների ինքնուրույն հետազոտական գործունեություն>>**բաժնում,ապա առաջարկում են հիմնահարցի վերաբերյալ իրենց լուծումները:

Սովորողների ինքնուրույն հետազոտական գործունեություն:

Խմբային աշխատանքներ .

*Նախագծի ղեկավարը աշակերտների ընտրությամբ,նրանց կարծիքը հաշվի առնելով կազմում է հետազոտական **երկու** աշխա-տանքային թիմ (խումբ) յուրաքանչյուրում **հինգ** աշակերտ (դասարանում սովորում է **11**աշակերտ):*
Յուրաքանչյուր թիմի աշխատանքը պետք է կազմված լինի 5 բաժիններից,որոնք ամրագրված են <<Թիմեր,դերեր>> բաժնում:
I խումբ (թիմ) *- Կազմում է 22-ում տարածված 15 և Շիրակի մարզում տարածված10 **ձմեռող** թռչունների անվանումների ցանկն ըստ նկարների՝ նշելով*
1. սննդառությունը,
2. կենսակերպը,
3. բազմացումը ,
4.նրանց օգտակարությունն ու վնասակարությունը բնության և մարդու համար:
5. Շնորհահանդեսին ներկայացնում է նախագծի ղեկավարի և կառավարիչի օգնությամբ ընտրված 1-ական երգ և բանաս-տեղծություն՝ նվիրված թռչուններին :
II խումբ (թիմ) *- Կազմում է 22-ում տարածված 15 և Շիրակի մարզում տարածված 10**ձմեռող** թռչունների անվանումների ցանկն ըստ նկարների՝ նշելով*
1.դասը,
2.տիպը,
3.տեսակը,
4. սպառնացող վտանգները,
5.սպառնացող վտանգների կանխման ուղղությամբ բնապահպանական միջոցառումների համառոտ բնութագիրը և նկարները /կերաման, թռչնաբուն և այլն/:
*6. 22 –ում տարածված ձմեռող 10 **գիշատիչ** թռչունների անվանումը,նկարը և սննդատեսակը :*
. Շնորհահանդեսին ներկայացվում է 1 բանաստեղծություն՝ նվիրված թռչուններին :

Նախագծի վերջնարդյունքները

*	Նախագիծն իրականացնող սովորողները կմասնակցեն բնապահպանական միջոցառումների պլանավորման հիմնախնդիրների՝ վտանգների և ռիսկերի վերացման աշխատանքներին:
*	Սովորողները հարուստ գիտելիքներ ձեռք կբերեն Հայաստանում նստակյաց կյանք վարող ձմեռող թռչուններ նրանց գոյությանն սպառնացող ռիսկերի ու վտանգների մասին:
*	Թիմի անդամները կներգրավվեն բնապահպանական թեմաներով հետազոտական աշխատանքներին, իրենց անձնական և թիմային ներդրումը կունենան ՀՀ-ում ձմեռող թռչուններին ցուցաբերվող խնամքի ու ամենօրյա հոգածության գործում:
*	Նախագծի մասնակիցները կկարողանան տեսնել բնապահպանական խնդիրները, կունենան գիտելիքներ, կա ղություններ ու հմտություններ, նաև պատրաստակամություն ՀՀ-ում ձմեռող թռչունների առջև ծառացած տահրավերները հաղթահարելու համար:
*	Համայնքի հանրությունը և տեղական ինքնակառավարման մարմինները ծանոթանալով սովորողների նախ գծային աշխատանքներին, կլինեն առավել իրազեկված ՀՀ-ում ձմեռող թռչունների, նրանց գոյությանն սպառն ցող ռիսկերի ու վտանգների, դրանց հաղթահարման ուղղությամբ իրենց անելիքների մասին և կավելանա բ պահպանների թիվը:
*	Ձմեռող թռչնատեսակները կփրկվեն ոչնչացումից, որից կշահեն բնությունն ու մարդը:
*	Սովորողները կվարժվեն բնապահպանական թեմաներով թիմային աշխատանքներին և բնության հանդեպ դրսևորած բարձր պատասխանատվության արդյունքում եկող սերունդներին կթողնեն առավել ներդաշնակ նություն և հարուստ թռչնաշխարհ:
*	Սովորողների մոտ կձևավորվեն աշխատանքային հմտություններ գիտական նյութերի ստեղծման և թռչնա ու կերակրամանների պատրաստման ուղղությամբ:

Կարողություններ,որոնք կզարգանան նախագծի իրականացման ընթացքում

*	***Սովորել սովորելու կարողություն.*** *(Սովորողը որոնում,գտնում և սովորում է մինչ այդ իրեն անծանոթ գիտակ տեղեկություններ).*
*	***Թվային և մեդիա կարողություններ.*** *(Սովորողը թեմայի շուրջ հարուստ տեղեկատվություն ստանալու համա դիմում է գիտական գրականությանը,էլեկտրոնային դասագրքերին,ինտերնետային կայքերում տպագրված հոդվածներին).*
*	***Ինքնաճանաչողական և սոցիալական կարողություններ.*** *(Սովորողը գնահատում է իր դերը բնապահպանակ խնդիրների լուծման գործում և ձգտում է զարգացնել նախագծին վերաբերվող խնդիրների լուծման անձնակ կարողությունները).*
*	***Լեզվական կարողություններ.*** *(Գիտական տերմինների ու անվանումների ճիշտ օգտագործում նախագծում և կյանքում).*
*	***Տնտեսագիտական կարողություններ.*** *(Թռչունների դերը գյուղատնտեսության մեջ՝ կրծողների դեմ պայքարում որպես բերքատվության բարձրացմանը նպաստող գործոն).*
*	***Մշակութային կարողություններ.*** *(բնության,նրա մասը կազմող թռչունների արտաքին բազմազանության ու գեղեցկության,ձայնային ազդանշանների միջոցով նրանց հաղորդակցման,բների պատրաստման տարատեսակության բացահայտում և ընկալում).*
*	***Գիտական նյութերի պատրաստման և հետազոտությունների կատարման կարողություններ*** *(պաստառ, գրքույկ, սահիկաշար,զեկույց,հուշաթերթիկ,տեսագրություն և այլն).*
*	***Հաղորդակցման կարողություններ.*** *(Շփում թիմակիցների,համայնքի հանրության,ինքնակառավարման մարմինների,կրթօջախի աշակերտների,ուսուցիչների,տնօրինության հետ,նախագծի աշխատանքների շնորհահանդեսում անհատական ելույթներ).*

Նախագծի վերջնարդյունքների ներկայացման ձևը

Շնորհահանդեսին ներկայացվող աշխատանքները

○ Տեսանյութ	○ Պատի թերթ	○ Վեբ կայք	v Գրքույկ (բուկլետ)
v Սահիկաշար(սլայդ)	○ Զայնվածք (փողբասթ)	○ Ամսագիր	○ Գրքի ձևավորում
v Տեղեկատվական թերթիկ	○ Ֆոտոալբոմ	v Պաստառ	○ Այլ

Նախագծի կատարման հաջողության պայմանները

*	Թիմի անդամների հետ համերաշխ և ակտիվ համագործակցություն:
*	Նախագծի նկատմամբ շահագրգիռ վերաբերմունք:
*	Տարբեր սկզբնաղբյուրների հետ հետևողական և ամենօրյա աշխատանք:
*	Հանրության հետ աշխատելու պատրաստակամություն:
*	Ժամանակացույցի պահանջների կատարում:
*	Նախագծին վերաբերող նյութերի ներկայացում շնորհահանդեսում:
*	Կրել ստանձնած դերի պատասխանատվություն
*	Համագործակցել նախագծի ղեկավարի, նախագծի կառավարչի և թիմի համակարգողների հետ:

Նախագծի իրականացման փուլերը (քայլերը)

N	Բովանդակություն
1.	Նախագծի թեմայի ընտրություն:
2.	Նախագծի հիմնախնդրի ընտրություն:
3.	Ընտրված թեմայի կարևորության նշում:
4.	Աշխատանքային խմբերի (թիմերի) ձևավորում:
5.	Հիմնախնդրին առնչվող աղբյուրների տրամադրում:
6.	Խմբերի ինքնուրույն հետազոտական աշխատանք(ուսումնասիրություններ սկզբնաղբյուրներում):
7.	Կատարված աշխատանքների միջանկյալ քննարկումներ:
8.	Խմբերի անդամների աշխատանքների միավորում և նյութերի ստեղծում(գրքույկ,սահիկաշար և այլն):
9.	Կատարված աշխատանքների ներքին գնահատում թիմերից յուրաքանչյուրի անդամների,նախագծի ղեկավարի,նախագծի կառավարչի մասնակցությամբ,թերությունների վերացում:
10.	Նախագծի աշխատանքների շնորհանդեսի ծրագրի կազմում:
11.	Շնորհանդես:Լավագույն աշխատանքների խրախուսում;
12.	Նախագծն վերաբերվող աշխատանքների մեկական օրինակների ներկայացում համայնքապետարան:
13.	Ստեղծած տեղեկատվական թերթիկների բաժանում համայնքի անդամներին:

Թիմեր,դերեր

Նարե Զաքարյան-նախագծի կառավարիչ (*Նախագծի ղեկավարի աջակցությամբ ամենօրյա համագործակցությա[illegible] համակարգում է թիմերի աշխատանքը,պարզում է առաջացած դժվարությունները,հղկում է անորոշությունները, կ[illegible] տարում է պարզաբանումներ այս կամ այն հարցի վերաբերյալ,օգնում է օրինակելի հավելվածներից ընտրել լավա- գույն ձևափուղթը կամ ստեղծել նոր ձևաթուղթ, վերահսկում է ժամանակացույցը,նախատեսված աշխատանքների կ[illegible] տարման ընթացքը,իր խորհուրդներով օժանդակում է թիմերին գրականության,սկզբնաղբյուրների տրամադրման, գրքույկների,սահիկաշարերի(սլայդ),պաստառների,հուշաթերթիկների պատրաստման գործում,կապ է ապահովու[illegible] հանրության և բնապահպանության համար պատասխանատու տեղական նշանակության պետական կառույցի հ[illegible] (համայնքապետարան):Նախագծի ղեկավարի հետ կազմում է թիմերի կատարած աշխատանքների շնորհանդես[illegible] ծրագիր,նախագծի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է շնորհանդեսի կազմակերպմանն ու անցկացմ[illegible] նր,որտեղ ամփոփվում են թիմերի աշխատանքները և գնահատվում են թիմերը:*)

Թիմ/խումբ	*N*	*Անուն ,ազգանուն*	*Դեր*	*Առաջադրանքը*	*Օրինակե[illegible] հավելված[illegible]*
I	*1.*	*Համիկ Մանուկյան*	*Թիմի համակարգող*	*Համառոտ տեղեկություն Հայաստանում հայտնաբեր- ված չվող և նստակյաց ձմեռող թռչունների մասին, ապա կազմել աղյուսակ բնության և մարդու համար թռչուննե- րի օգտակարության ու վնասակարության վերաբերյալ:*	*Հավելվա[illegible]*
	2.	*Հովհաննես Պողոսյան*	*անդամ*	*ՀՀ-ում տարածված 10-15 ձմեռող թռչունների անվանում- ների ցանկն ըստ նկարների՝ նշելով թռչունների սննդա- ռությունը,կենսակերպը, բազմացումը:*	*Հավելվա[illegible]*
	3.	*Ցողինար Հովհաննիսյան*	*անդամ*	*Շիրակի մարզում տարածված10-15 ձմեռող թռչունների անվանումների ցանկն ըստ նկարների՝ նշելով թռչուննե- րի սննդառությունը, կենսակերպը, բազմացումը :*	*Հավելվա[illegible]*

	4.	Սարգիս Գևորգյան	անդամ	Շիրակի մարզում տարածված10-15 ձմեռող թռչունների անվանումների ցանկն ըստ նկարների՝ նշելով նրանց օգտակարությունն ու վնասակարությունը բնության և մարդու համար :	Հավելված-4
	5.	Միլենա Հովհաննիսյան	անդամ	Թռչուններին վերաբերվող 5 երգերի հավաքագրում (նշել երաժշտության հեղինակը)նախագծի կառավարիչի օգնությամբ, քանի որ երեխան ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք(ներառական):	Հավելված-5
II	1.	Հայկո Գևորգյան	Թիմի համակարգող	Կազմել աղյուսակ ,նշելով ձմեռող թռչունների դասը, տիպը,տեսակը նկարներով:	Հավելված-6
	2.	Ալվարդ Մարգարյան	անդամ	Ներկայացնել ձմեռող թռչուններին սպառնացող վտանգները,որոնց պատճառով նրանք գտնվում են ոչնչացման վտանգի առաջ և գրանցված են Կարմիր գրքում:	Հավելված-7
	3.	Արման Նահապետյան	անդամ	Ձմեռող թռչուններին սպառնացող վտանգների կանխման ուղղությամբ բնապահպանական միջոցառումների համառոտ բնութագիրը և նկարները/կերամաև, թռչնաբուն և այլն/:	Հավելված-8
	4.	Սևակ Պետրոսյան	անդամ	ՀՀ –ում տարածված ձմեռող գիշատիչ թռչունների անվանումը,նկարը և սննդատեսակը:	Հավելված-9
	5.	Միեր Գրիգորյան	անդամ	Թռչուններին վերաբերվող 10 բանաստեղծությունների հավաքագրում՝նշելով հեղինակը:	Հավելված-10

Նախագծի իրականացման ժամանակացույց

Գործողություններ	Փետրվար			մարտ	
Նախագծի թեմայի ընտրություն: Հիմնախնդրի ձևակերպում:	6				
Աշխատանքային խմբերի (թիմ) ձևավորում: Աշխատանքի բաժանում:	13				
Հիմնախնդրին առնչվող աղբյուրների տրամադրում:		20			
Խմբերի ինքնուրույն հետազոտական աշխատանք (ուսումնասիրություններ սկզբնաղբյուրներում):			27		
Կատարված աշխատանքների միջանկյալ քննարկումներ:				5	
Կատարված աշխատանքների ներքին գնահատում թիմերից յուրաքանչյուրի անդամների, նախագծի ղեկավարի, նախագծի կառավարչի մասնակցությամբ:Թերությունների վերացում:					12
Նախագծի աշխատանքների շնորհանդեսի ծրագրի կազմում:					
Շնորհանդեսի փորձեր:					
Շնորհանդես:Լավագույն աշխատանքների խրախուսում:					
Նախագծն վերաբերվող աշխատանքների մեկական օրինակների ներկայացում համայնքապետարան:					
Ստեղծած տեղեկատվական թերթիկների բաժանում համայնքի անդամներին:					

Գնահատում

/Ներկայացվում է աշխատանքների գնահատման չափորոշիչները 1-10 միավորային սանդղակով/

Միավոր/չափանիշ	1-3	4-6	7-8	9-10
Բովանդակություն	ՈՒսումնասիրությունները չեն առնչվում հիմնախնդրին	ՈՒսումնասիրությունները մասսամբ են առընչվում հիմնախնդրին	ՈՒսումնասիրությունները առնչվում են հիմնախնդրին	ՈՒսումնասիրությունները կատարվ են լիարժեք
Ինքնատիպություն	Նյութերը ներկայացված են առանց մշակման	Նյութերը ներկայացված են միօրինակ	Նյութերը բազմազան են	Նյութերը ներկայա վում են հետաքրքի մոտեցումներով
Տեղեկատվություն	Ներառված են սահմանափակ տեղեկություններ	Նյութերում օգտագործված են 1-2 տեղեկատվություն	Նյութերը ներկայացվում են հետաքրքիր, առկա են սեփական դատողություններ	Նյութերը բազմազ են,ստեղծագործաբ վերլուծված
Մեդիաաղբյուրների օգտագործում	Նյութերում բացակայում են մեդիաաղբյուրները	Նյութերում առկա են մեդիաաղբյուրներն իրենց հղումներով	Նյութերում օգտագործված են մեդիանյութեր,նկարներ,դիագրամներ	Նյութերում օգտագործված են տեսա նյութեր,հարցումն մուլտիմեդիայի տ ներ
Խմբակային աշխատանք	Խմբում աշխատանքային պարտականությունները չեն բաշխվել	Խմբի անդամների մեծ մասը մասնակցել է աշխատանքներին	Խմբի անդամների մեծ մասն իրենց ներդրումն ունեն ընդհանուր գործի մեջ	Աշխատանքներին հավասարապես ե մասնակցել խմբի բ լոր անդամները

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

I ԽՈՒՄԲ

1	Wikipedia, https://hy.wikipedia.org › wiki –Հայաստանի թռչունների ցանկ:
2	Wikipedia, https://hy.wikipedia.org › wiki -Հայաստանում ձմեռող թռչուններ:
3	Wikipedia, https://hy.wikipedia.org › wiki -Թռչունների հայերեն անվանումները:
4	Մարտին.Ս.Աղամյան,Դանիել Կլեմ-<<Հայաստանի թռչունները>> (Դաշտային ուղեցույց) -1995թ.:
5	Ս.Կ.Դալ.<<Հայկական ՍՍՌ-ի կենդանական աշխարհը>>:
6	Մ.Հ.Այվազյան-<<Հայաստանի բնաշխարհ>>:
7	Wikipedia, Կատեգորիա-<<Հայաստանի թռչուններ>>:

II ԽՈՒՄԲ

1	Wikipedia, https://hy.wikipedia.org › wiki –Հայաստանի թռչունների ցանկ:
2	Wikipedia, https://hy.wikipedia.org › wiki -Հայաստանում ձմեռող թռչուններ:
3	Wikipedia, https://hy.wikipedia.org › wiki -Հայաստանի կենդանիների կարմիր գիրք:
4	Wikipedia, https://hy.wikipedia.org › wiki -Հայաստանի բնաշխարհ հանրագիտարան:<<Ո՞ր կենդանիներն են ներառված ՀՀ կենդանիների Կարմիր գրքում >>:
5	Մարտին.Ս.Աղամյան,Դանիել Կլեմ-<<Հայաստանի թռչունները>> (Դաշտային ուղեցույց) -1995թ.:
6	Կ.Տ.Աղաբաբյան,Ա.Աղասյան-<<ՀՀ կենդանիների կարմիր գիրք>>:
7	Մեդիագրադարան-<<Թռչնաբներ և կերամաններ>>:.